

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Յովհաննէս Թումանեանը վաղուց արդէն հայ ժողովրդի նուիրական ազգային խորհրդանիշների շարքում է: Մեծարանքի այդ բացառիկ համարումը նա արժանիօրէն վաստակել է ոչ միայն իր ստեղծագործութեամբ, որ ամէնից առաջ «հայոց վշտի մեծ ծովի մէջ» տառապող հոգու պատմութիւնն է, այլեւ անձնական կեանքի պատմութեամբ, որ ինքնին բացառիկ է իբրեւ երեւոյթ, համաշխարհային գրականութեան մէջ անգամ քիչ են այնպիսի անհատականութիւններ, որոնց անձնական կեանքն ու ստեղծագործութիւնը այդպիսի ներդաշնակ ամբողջականութեամբ շարունակէին ու լրացնէին միմեանց: Առաջին համաշխարհային պատերազմը եւ հայ ժողովրդին պատուհասած անախադէպ աղէտը փորձաքար պիտի դառնային ազգային մեծ բանաստեղծի ի վերուստ սահմանուած այդ առաքելութեան համար: Մղձաւանջային այդ տարիներին Թումանեանի տեսածը, ապրածն ու վերապրածը պիտի ապացուցէին, որ նա բոլոր փորձութիւնների մէջ իր իսկ անձնական թանկ կորուստների գնով¹ մինչեւ վերջ հաւատարիմ պիտի մնար իր առաքելական կոչումին:

Պատերազմը առաջին իսկ օրուանից կտրուկ փոխում է բանաստեղծի կեանքի ռիթմը: «Գրողների ընկերութիւնն իր գրական երեկոյքներով ու հաւաքոյքներով մնաց մի կողմ, նոյնիսկ միառժամանակ դադարեց, - յիշում է բանաստեղծի դուստրը՝

1 Ռազմաճակատում գոհուել էր նրա Արտաշէս եղբայրը, որդին՝ Արտաւազը, սպանուել էր վաթի մեծ գաղթի ժամանակ, ինքը դուստրերի հետ, մահաբեր համաճարակների պայմաններում էջմիածնում գրադուած էր հազարաւոր հայ որբերի խնամատարութեամբ՝ դառնալով նրանց հոգեւոր հայրը:

Նուարդը: – Հայրիկն առաջուայ մման այլևս չէր գրադուում ընկերութեան գործերով, չէր ոգևորուում եւ գրականութեամբ էլ չէր պարապում²: *Կանխատես հոգին գուցէ արդէն զգում էր գալիք արհաւիրքների չարաղէտ շունչը:*

Պատերազմի եւ յետպատերազմեան տարիներին Թումանեանի ազգային-հասարակական բազմակողմանի գործունէութիւնը բաւական ուսումնասիրուած է: Սակայն 1914-1915 թուականներին վերաբերող շատ նամակներ «ծոցատետրային ու օրագրային գրառումներ» ժամանակակիցների յուշեր ու վկայութիւններ կան «որ դեռեւս ըստ պատշանի չեն արժանացել ուսումնասիրողների ուշադրութեանը» մինչդեռ հէնց այդ էջերում է ամէնից աւելի ցայտուն ուրուագծուում նրա՝ ազգանուէր հայի ու անձնագոհ գործչի անկրկնելի կերպարը: Այդ նիւթերի համակողմանի համակարգուած քննութիւնը տեւական ուսումնասիրութեան խնդիր է: Այս համառօտ յօդուածում փորձել ենք ընդհանուր բնութագրումներով ներկայացնել ոգեւորութեան ու տազնապանների «յոյսերի ու հիասքափութիւնների հոգեբանական այն լարուած կացութիւնը» որ այդ դաժան տարիներին հոգեկան ծանր վայրկիւրումների մէջ էր պահում մի ամբողջ ազգային հանրութիւն ու նրա բանաստեղծին: Յիրաւի, մարգարէական էին դեռեւս 1902ին գրուած թումանեանական յայտնի քառատողերը.

Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խաւար մի ծով ահագին,
Էն սեւ ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին:

Մերք գայրացկոտ ծառս է լինում,
Մինչեւ երկինք կապուտակ,
Ու մերք յոգնած սուգում, իջնում,
Դէպի խորքերն անյատակ:

Ոչ յատակն է գտնում անվերջ,
Ու ոչ հասնում երկնքին,
Հայոց վշտի մեծ ծովի մէջ,
Տառապում է իմ հոգին³:

2 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Ն., *Յուշեր եւ գրողներ*, Երեւան 1969, 119:

3 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., *Նրկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 1, Երեւան 1988, 200:

Պատերազմի սկզբում Թուրքիայի սպասուող մասնակցութիւնը հայ բանաստեղծին հակասական մտորումների տեղիք էր տալիս: Մի կողմից նա մտավախութիւն ունէր, որ Բիսմարկի, Մետերնիխի ժառանգներ ինվերի, Թալէաթի, Ջամալի երիտ-թուրքական կառավարութիւնից լաւ բան չի կարելի սպասել ա-րեւմտահայութեան համար. չէ որ այդ կառավարութիւնը ըստ էութեան Աբդուլ Համիդի արիւնարբու բռնատիրութեան դիմա-կաւորուած տարբերակն էր: Ուստի նա անձնական նախաձեռ-նութեամբ, ինչպէս արդէն նկատուել է ուսումնասիրողների կող-մից, «հայ ժողովրդի գալիք ողբերգութիւնը հնարաւորին չափ կան-խելու, առանց սպասելու որեւէ հաստատութեան, ընկերութեան կամ կուսակցութեան միջնորդելուն»⁴, գործնական տարբեր գրութիւն-ներ է ուղարկում հայ եւ ռուս մի շարք պաշտօնատար անձանց՝ առաջարկելով իր ծառայութիւնը: Թումանեանի՝ այս ուղղու-թեամբ յետագայում ծաւալած ողջ ինքնամոռաց գործունէու-թիւնը մէկ անգամ եւս հաստատում է, որ նրա խօսքն ու գործը երբեք չեն տարբերուել իրարից, որ նա ամէն պարագայում ու ամէն իրադրութեան մէջ պատրաստ է եղել կիսելու իր ժողո-վրդին բաժին հասած տառապանքն ու անվերջանալի փորձու-թիւնները: Այս մտահոգութիւնները, յետագայում նաեւ սեփական աչքով ու ականջով իր տեսածներն ու լսածները յանձնում են թղթին, վերածուելով բանաստեղծութիւնների, յուշերի, օրագրա-յին գրառումների, յօդուածների, դառնում մեծ ողբերգութեան, դրա շանդէպ քաղաքակիրթ աշխարհի անտարբերութեան, մարդ արարածի մարդկային դիմագծի կորստեան պատմական տխուր վաւերագրեր:

Միւս կողմից, խորապէս հաւատալով Ռուսաստանի եւ նրա դաշնակիցների յաղթանակին, Թումանեանը Թուրքիայի պատե-րազմի մէջ մտնելու փաստի հետ Արեւմտեան Հայաստանի ազա-տագրութեան յոյսեր էր կապում: Այդ մասին են վկայում «Ապա-շաւանք», «Սրանով կյաղքես», «Վերջին տագնապը», «Հիմ խօսքը» եւ այլ հրապարակախօսական յօդուածներ:

1914 Հոկտեմբերի 31ին, «Հոփգոնում» տպագրուած «Եր-րորդ գարկը» յօդուածում, այդ հաւատը աւելի հիմնաւոր է ներ-կայանում: Յիշելով ռուս-թուրքական երկու պատերազմները (1827-1828, 1877-1878) եւ վիպական դարձած երկու հայ հերոս-

4 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Լ., Յովհաննէս Թումանեանի հասարակական գործունե-ութիւնը, Երեւան 1992, 100:

ներին՝ Աղասուն («Վերք Հայաստանի») եւ Վարդանին («Խնձոր»), նրանց ճակատագրերը ե՛ւ նոյնական է դիտում, ե՛ւ տարբեր: Երկուսն էլ «ժողովրդական հերոսներ» էին, կուռւմ էին հայրենիքի ազատութեան համար: Բայց եթէ առաջինը իր կուռւի մէջ դեռ «պատահական, մենակ ու խեղճ» էր, ապա երկրորդը արդէն մենակ չէր, նրա կողքին էին նոյն նպատակին զինուորագործւած զինակից հերոսները՝ Դուդուկչեանը, Ֆահրատը, Սահրատը, Ասլանը, Կարոն: Ճակատագրերի այս տարբերութեան մէջ թումանեանը պատմական տրամաբանութիւն է տեսնում: Երրորդ՝ ընթացիկ պատերազմի «հայ ժողովրդական հերոս» Անդրանիկն արդէն իրական անձնաւորութիւն է, շատ ընկերներով, ազատութեան գաղափարն ընդհանուր ու շարժումը համագգային»⁵: «Նւ էսպէս, - եզրակացնում է բանաստեղծը, - էս երրորդ պատերազմը աւանդական խորհրդաւոր երրորդ զարկն է: Երրորդ զարկն է վնոում խնդիրը: Երրորդ զարկով հիւսիսի հսկան՝ մեծ Ռուսաստանը, վնոում է հայ ազգի հին, արիւնոտ խնդիրը, ապահովում է նրա ապագան ու առաջնորդում նրան դէպի ազատ ազգերի եղբայրութիւնը»⁶:

Այդ հաւատով են լիցքաւորւած նաեւ այդ օրերին գրւած մի քանի բանաստեղծութիւններ: Յօդուածից ընդամէնը երեք օր անց՝ Նոյեմբերի 3ին, Բաքուի «Արեւ» թերթում տպագրւում է «Վերջին տագնապը» բանաստեղծութիւնը: Թուրքական բռնապետութիւնը համեմատւում է «հին վիշապի» հետ, որ «վեր է կացել նոր քափով», «վերջին մոլի տագնապով»: Բայց անգոր են նրա գալարումները:

Ու նրա դէմ ելած անգուսպ, անսահման,
Յորձանք տալով ամէն կողմից՝ հայութեան,
Հին հին յոյսերն ու յուզումներ դարաւոր,
Ծառս են լինում լեռներն ի վեր ալեւոր:

Ու ամպերում, բարձր ուսից Մասիսի,
Սլացում է մեծ արծիւը հիւսիսի,
Շիտակ դէպի բարձունքները հայկական,
Իր յետեւից հայի բախտն ու ապագան:⁷

5 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 7, Երեւան 1995, 158:

6 Անդ, 159:

7 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 1, 268:

Ի հարկէ, այսօր, դարաւոր հեռուից հեշտ է ասել, թէ Թումանեանը պարզապէս սխալոււմ էր: Բայց այդ օրերին բանաստեղծի հաւատն ու վստահութիւնը հիմնուած էին պատմական իրողութիւնների սթափ վերլուծութեան վրայ: Նոյնիսկ այսօր ոչ ոք չի կարող ստոյգ ասել, թէ ինչպէս կը դասաւորուէր հայութեան ճակատագիրը, եթէ չլինէին աւերիչ 1917 թուականը, ռուսական կայսրութեան փլուզումը եւ բանակի խուճապական փախուստը արեւելեան ռազմաճակատից:

Այնուամենայնիւ, փաստը մնում է փաստ, որ, ինչպէս ցոյց տուեց պատմութեան յետագայ ընթացքը, Թումանեանի այդ օրերի հաւատն ու լաւատեսութիւնը վաղաժամ էին: Ռուսաստանը, ինչպէս եւ նրա դաշնակիցները, առաջնորդոււմ էին միայն իրենց քաղաքական շահերով, որոնք յաճախ անհամատեղելի էին հայերի ազատագրութեան խնդիրների հետ:

Պէտք է նկատի ունենալ նաեւ մի կարեւոր. հանգամանք. Թումանեանի՝ հրապարակային ընթերցողի համար նախատեսուած յօդուածների լաւատեսական շեշտուածութիւնը առաջին հերթին նպատակ ունէր ոգեւորելու ժողովրդին, հաւատ ու յոյս ներշնչելու նրան: Նոյն օրերին գրուած մի քանի այլ յօդուածներում («Կարելոյ յոյսն ու դարելոյ ճանապարհը», «Աւերակների ու դիակների աշխարհում», «Պատերազմի տպաւորութիւններից» եւ այլն), որոնք գրուած են պատերազմի իրական դէմքը սեփական աչքով տեսնելուց յետոյ եւ ժամանակին չեն տպագրուել, նկատելի են բանաստեղծի լուրջ ու ընդգծուած մտահոգութիւնները՝ կապուած ժողովրդի ներկայի եւ ապագայի հեռանկարների հետ: Այսպէս, անդրադառնալով արեւմտահայութեան կոտորածներին, գրում է. «Որտեղ հասցրել են՝ կոտորել են հայերի, գլխաւորապէս տղամարդկանց, ու հետմերը տարել գեղեցիկ կանանց, եւ եթէ ժամանակ են ունեցել քարքարոսական գուարճութիւններ են յօրինել: Երեխաների ճակատներին մեխ են գարկել, խաչել են, կենդանի մարդկանց մարմնի զանազան մասեր կտրատել են, զանազան կերպ դասաւորել, խաղեր են արել, միմչեւ կէսը դրել են պղինձն ու կէսից ներքեւ եփել, որ միւս մասը կենդանի տեսնի ու զգայ...»⁸:

Այսպիսի գրառումներում բանաստեղծը խոր ցաւ է ապրում առհասարակ մարդու համար, որ կորցրել էր բանական արարածի իր նկարագիրը՝ գերազանցելով անգամ գիշատիչ գազաններին: Ցաւն աւելի է ծանրանում, երբ տեսնում է, որ «Էւ-

պետով գազամուծեան են հասցրել մահւ շատ հայերի ու կործանել են մեր ցեղը ոչ միայն ֆիզիկապէս, այլեւ բարոյապէս»⁹:

Կեանքի տարբեր ոլորտներում տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ շփումներ ունեցող բանաստեղծը խոր փաստասանքով արձանագրում է մի կարեւոր փաստ. հայ ժողովուրդը դարեր շարունակ անցել ու անցնում է դառնութիւններով, փորձութիւններով, տառապանքներով լի երկարուձիգ ճանապարհ, այդ մասին, սակայն, ըստ էութեան տեղեակ չեն աշխարհի գերտէրութիւնները՝ ո՛չ Եւրոպան, որ միայն վերջին ժամանակներն էր սկսել զբաղուել Հայկական հարցով, ո՛չ Ռուսաստանը, որ արդէն մէկ հարիւրամեակ է՝ տիրում է հայ ժողովուրդի մի հատուածին եւ պատերազմներ մղում այստեղ, ո՛չ էլ նոյնիսկ հայ մտաւորականութիւնը, որ անմիջականօրէն շահագրգիռ է Հայկական հարցի լուծման խնդրով. «Դարաւոր անլուր տառապանքների բոլոր միութեան ու փաստաթղթերը դեռ ի մի չեն քերուած ու դեռ մի պատմութիւն չկայ դրանցից գրուած նոյնիսկ հայերէն լեզուով: Բայց ով որ շատից-քիչ ծանօթ է էդ ցամ ու ցրիւ վկայութիւններին, կիսատատի, որ էն տեսակ տանջանք ու տառապանք, ինչ որ հայ ժողովուրդն է տեսել արեւելեան բռնակալներից ու բարբարոսներից, չի տեսել ոչ մի ժողովուրդ ոչ մի աշխարհում»¹⁰:

Անվերջանալի կոտորածներից ու կռիւներից ուժասպառ ժողովուրդը եւ նրա մտաւորական զաւակներից շատերը յոյսները երբեմն կապում էին Արեւմուտքի քրիստոնեայ ազգերի հետ, փրկութիւն ակնկալում Ռուսաստանից: Թումանեանը, բարձր գնահատելով հանդերձ յատկապէս Ռուսաստանի դերը, կարեւոր դիտարկում է անում. հայ ժողովուրդը շարունակ պայքարում, կեանքի է ձգտում «ոչ թէ միայն նրա համար, որ գոյութիւն ունենայ աշխարհում, այլ նրա համար, որ էդ գոյութեան մէջ կայ մի բարձր խորհուրդ, որ թանկագին է դարձնում ամէն մի գոյութիւն: Թէ չէ եթէ միայն լոկ ֆիզիկապէս ապրելու խնդիրը լինէր, վաղուց ու շատ հեշտ վնասուած կլինէր խնդիրը՝ յարմարուած ու ձուլուած կլինէր նրանց, որոնց դէմ մաքառում է դարերով»¹¹: Բանաստեղծի այս ուշադրաւ դիտարկումը հաստատում է հազարամեակների պատմութեան փորձով: Այդ փորձը սովորեցրել է ժողովուրդին տարբերել պարզապէս լինելը իմաստաւոր լինելութիւնից: Եւ ի-

9 Անդ, 441:

10 Անդ, 433:

11 Անդ, 438:

րօք, հայ մարդու մղած անվերջանալի պայքարների առաջմղիչ զօրութիւնը նախեւառաջ եղել է եւ է հոգեւոր գոյութեան, ազգային ոգու, ինքնութեան պահպանման գերխնդիրը:

1915 թուականի ապրիլի 21ին «Հորիզոն»-ում թումանեանը Հայ գրողների ընկերութեան անունից հրատարակում է մի կոչ՝ ուղղուած Ամերիկայի, Իտալիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Անգլիայի, Ֆրանսիայի եւ այլ պետութիւնների գրականագէտներին եւ խմբագրութիւններին: Բանաստեղծը յիշեցնում է, որ հայ ժողովուրդը աշխարհի հնագոյն ազգերից է, որ դարեր շարունակ պայքարել է թուրքական զաւթիչների դէմ ազատութեան եւ մարդկային տարրական իրաւունքների համար: Այսօր էլ համաշխարհային այս թոհուրոհի մէջ թուրքական կառավարութիւնը դարձեալ փորձում է անմարդկային հերթական ոճրագործութեամբ «վերջ դնելու հայ ժողովրդի քաղոքին ու դատին»¹²: Բանաստեղծը դիմում է տարբեր ազգերի մտաւորականութեանը՝ բարձրացնելու իրենց ազդու ձայնը «այս անօրինակ ռմիթի հանդէպ յաճում մարդասիրութեան, քրիստոնէութեան եւ կոլտուրայի»¹³:

Թումանեանը երկու անգամ 1914ի Նոյեմբեր-Դեկտեմբերին եւ 1915ի Յունիսին, եղել էր Արեւմտեան Հայաստանում, ականատես էր եղել արեւմտահայութեան մեծ ողբերգութեանը: Առաջին անգամ իբրեւ Ազգային բիւրոյի կենտրոնական կոմիտէի անդամ, Շիրվանզադէի, Ներսիսեան դպրոցի տեսուչ Յովսէփ Խունունցիի եւ հոգեւոր այլ այրերի հետ մեկնում է ռազմաճակատ՝ պարզելու ճշմարտութիւնը հայ կամաւորական ջոկատների մասին ստայօղ լուրեր էին պտտւում, թէ ռուսական բանակում կռուող հայ կամաւորները զբաղուած են կողոպտւոյն եւ սպանում են քուրդ եւ թուրք խաղաղ բնակիչներին: Ճանապարհորդութեան մասին կայ երկու աղբիւր. մէկը թումանեանի ծոցատետրերն են, միւսը՝ Շիրվանզադէի «Պատերազմի վայրերում» ակնարկը: Նուաբը թումանեանը յիշում է, որ հայրը մտադրութիւն է ունեցել «այդ օրագրի հիման վրայ գրել ու հրատարակել իր ուղեգրութիւնները»¹⁴, սակայն չի արել, քանի որ համոզուած է եղել, որ ճշմարտութիւնը եւ իրական տպաւորութիւնները չեն տպագրուի, իսկ կեղծել ինքը չի կարող:

12 «Հորիզոն», 85, Թիֆլիս 1915:

13 Անդ:

14 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Ն., Յուշեր եւ գրոյցներ, 121:

Թուժանեանի ծոցատետրերի նշումներից երեւում է, որ կողկասում ծառայող ոչ բոլոր ռուս պաշտօնեաներն են, որ տեսնում եւ գնահատում են հայ մարդու նուիրութիւնն ու հաւատարմութիւնն իրենց, ինչպէս նաեւ անձնագործ քաջութիւնը ռազմաճակատի առաջնագծերում: Բանաստեղծը արձանագրում է, որ ռուս որոշ զօրապետեր ամենատարբեր պատճառաբանութիւններով խանդարում էին յանձնախմբի եւ կամաւորների հանդիպմանը՝ չցանկանալով բացայայտել ռազմաճակատներում ծաւալուող իրական դէպքերի մեղաւորներին եւ իրենց կողմնակալ վերաբերմունքը: Այս ամէնի մասին նա գրում է իր մտերիմ բարեկամին՝ Փիլիպպոս Վարդապարեանին ուղղած Դեկտեմբերի 10ի նամակում: Նեղսրտած արձանագրում է, որ «տխուր եմ տպաւորութիւնները», հափազանց «խախտու է վիճակը» եւ մխիթարական ոչինչ չկայ. «Ճանապարհներին դէպք եղաւ եւ թնդանօթածգութիւնը լսելու, երբ ռուսները քանդում էին քրդական գիւղերը, եւ քրդերի ու հայերի հրացանածգութիւնը, տեսնել գերիների խմբեր, ընկած դիակներ, աւերուած գիւղեր - միմիայն շներն ու կատուներն էին մնացել, որ սոսկալի ռոնում ու մլաւում եմ գիշերները, սոված ու անտէր»¹⁵:

Թւում է՝ այլեւս տեղ չի մնում ասելու, առաւել եւս գրելու յոսագրող ու ոգեւորող որեւէ խօսք: Սակայն բանաստեղծն իր սրբազան պարտքի խոր գիտակցութեամբ բարոյական իրաւունք չի վերապահում իրեն չհաւատալու հարազատ ժողովրդի վաղուայ օրուան: Այդ է վկայում 1915 Փետրուարի 8ին «Հորիզոնի» յաւելուածում տպագրուած «Հայրենիքիս հետ» բանաստեղծութիւնը, որ թէեւ սկսւում է տխուր, ողբերգական տրամադրութեամբ, «սեւ ու սուգի հովիտ» դարձած հայրենիքի պատկերներով, բայց եւ աւարտւում է լաւատեսութեամբ. բանաստեղծը յոյսի լոյս է բերում՝ հաւատ ներշնչելով վաղուայ օրուայ նկատմամբ:

Ու պիտի գայ հանուր կեանքի արշալոյսը վառ հագած,
Հագա՛ր-հագար լուսապայծառ հոգիներով քառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կեցածաժը պիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անժժով,
Պիտի գովեն քո մոր կեանքը մոր երգերով, մոր խօսքով,

15 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 10, Երեւան 1999, 220:

Իմ նո՛ր հայրենիք
Հըզո՛ր հայրենիք:¹⁶

Այսպէս ահա «գարկուա՛ծ ու զըրկուա՛ծ», «ողբի՛ ու որբի՛» հայրենիքը իմաստուն հոգու «յոյսի ու լոյսի» հեռապատկերում դառնում է «նոր ու հըզոր» մի երկիր, որ աշխարհասփիւռ հայութեան հայրենիքն է այսօր:

Նոյն լուսաւոր հաւատով է գրուած նաեւ 1915 Մայիսի 24ին «Հորիզոնի» 113ում տպագրուած «Դէպի մեծ կեանք» յօդուածը: Ինչպէս յուշում է հեղինակի ենթավերնագրային ծանուցումը, յօդուածը բովանդակում է «հայ օպտիմիստի» խորհրդածութիւնները մարդու եւ ազգերի, հանուր մարդկութեան եղբայրութեան, նրանց դէպի գեղեցիկ երազանքների իրականացում առաջադիմութեան ուղիների, համամարդկային այդ «մեծ կեանքի» տօնահանդէսում հայ ժողովրդի տեղի ու դերի մասին. «Տաեկական բռնակալութեան անկումով ու հայկական հարցի քարեյաջող լուծումով մեր առջեւ էլ նոր հորիզոններ են բացւում: - Հաւատով եզրակացնում է բանաստեղծը - Հնարաւորութիւններ են ստանում ապրելու շատ աւելի գեղեցիկ ու խոր զգացումներով, զբաղւելու մեծ խնդիրներով, մտնելու յառաջադէմ ազգերի եղբայրութեան մէջ ու նրանց հետ միասին երազելու կեանքի վսեմ երազները, նրանց հետ միասին մասնակից լինելու համամարդկային մեծ խնդիրների մշակոյթի ազնիւ գործին ու նրանց հետ միասին գնալու դէպի մեծ կեանք»¹⁷:

Թումանեանը, անշուշտ, լաւ էր գիտակցում, որ շարունակուող համաշխարհային սպանդի, մանաւանդ հայութեանը պատուհասած ահաւոր աղէտի պայմաններում իր լուսաւոր կանխագծումները կարող էին ընկալուել իբրեւ անիրատեսական ցնորքներ, սակայն, ինչպէս իրաւացիօրէն նկատում է Է. Զրբաշեանը, «իբրեւ բանաստեղծ եւ մտածող նա իր գործունէութիւնը չէր պատկերացնում առանց այդպիսի «վսեմ երազների», հաւատում էր, որ նրանք կ'օգնեն քայլ առ քայլ յաղթահարելու կեանքի քառսն ու այլանդակութիւնը»¹⁸:

16 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 1, 270:

17 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 7, 172:

18 ԶՐԲԱՇԵԱՆ, Է., *Թումանեանի գրական ժառանգութիւնը*, Երեւան 2000, 168:

Այս համառոտ ակնարկում հարկ չկայ հանգամանորէն անդրադառնալու Թումանեանի ռազմաճակատային ուղեւորութիւնների մանրամասներին¹⁹: Նկատենք միայն, որ աւելի ուշ՝ երկրորդ անգամ ռազմաքննութեան յայտնուած բանաստեղծի համար շատ անհասկանալի հարցեր պարզուում են: Դարձեալ Ազգային բիւրոյի յանձնարարութեամբ Թումանեանը Վանի ազատագրումից մէկ ամիս անց մեկնում է Իգդիր՝ այնտեղից անցնելով Վան: Մինչ այդ ռազմաճակատում ռուսական բանակի եւ հայ կամաւորների յաղթական առաջխաղացումով ոգեւորուած բանաստեղծը գրել էր «Վան եւ Երեւան» յօդուածը, որտեղ արտացոլուած է բանաստեղծի եւ իր ժողովրդի երազանքը՝ ազատագրուած տեսնել Վանը՝ ազգային դրօշով եւ ազգային երգով:

Վանում մեծ խանդավառութեամբ են ընդունում Թումանեանին՝ անուանելով նրան «երիտասարդութեան դաստիարակ ու մարգարէ»²⁰, իրենց «պայքարի առաջնալ ու ազատութեան գուշակ»²¹:

Բանաստեղծը 15-16 օրերի ընթացքում ծանօթանում է Վանին եւ նրա շրջակայքին: Այստեղ նա տեսնում ու ականատեսներէից լսում է անհանգստացնող նոր տեղեկութիւններ ռուսական բանակում տիրող բարքերի եւ հայ կամաւորների իրական կացութեան մասին: Բանաստեղծի օրագրային նշումները բացայայտում են այն մտահոգութիւնները, որոնք նախապէս էլ անհանգստացնում էին նրան: Իգդիրի, Վանի պաշտօնական շրջաններում շարունակ յիշեցնում էին հայ կամաւորների՝ իբր «խաղաղ քրդերի» վրայ յարձակուելու, նրանց «կողոպտելու», ինչպէս նաեւ ռուս զինուորների վրայ կրակելու մասին: Այնինչ պարզուում է, որ այդ յօրինովի լուրերը իրենք՝ իրական կողոպտիչներն էին տարածում, կամ զրպարտութեան էին հրահրում քուրդ ու թուրք գիւղացիների՝ յանցանքը իրենցից հեռացնելու համար: Ռուսական բանակի պաշտօնական շրջաններում էլ ամէն կերպ աշխատում էին նսեմացնել հայ կամաւորների դերը Վանի ազատագրութեան գործում: Թումանեանն զգում էր, որ այդ ամէնը

19 Յ. Թումանեանի՝ Արեւմտեան Հայաստան կատարած ֆանապարհորդութեան մանրամասները տե՛ս Լ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ «Յովհաննէս Թումանեանի հասարակական գործունէութիւնը» արժեքաւոր աշխատութեան մէջ (էջ 96-174), ինչպէս նաեւ բանաստեղծի ծոցատետրերի գրառումները, յօդուածներն ու ակնարկները:

20 «Աշխատանք», 28, Վան 1915:

21 Անդ:

ծրագրուած պետական քաղաքականութիւնն է՝ թելադրուած այն մտավախութեամբ, թէ պատերազմից յետոյ հայերը կարող են ինքնավարութիւն պահանջել: Ուստի նա իր կապերի ու ծանօթութիւնների միջոցով ամէն կերպ աշխատում էր ցրել հայ կամաւորների շուրջ ստեղծուած այդ տհաճ մթնոլորտը: Զպէտք է մոռանալ նաեւ այն հանգամանքը, որ ռուս բարձրաստիճան զինուորականութեան շրջանում քիչ չէին նաեւ մոլուկման պաշտօնեաները:

Թումանեանի՝ ռազմաճակատ երկրորդ այցելութեան մասին գրառումներում հանդիպում են նոր վկայութիւններ, որոնք ներկայացնում են պատերազմական կենցաղի նորանոր սահմուկեցուցիչ պատկերներ եւ մոլեգին հայատեսացութեան ցնցող արտայայտութիւններ: Յունիսի 29ին՝ Իզդիրում եղած ժամանակ, բանաստեղծն այսպիսի գրառումներ է արել. «Թուրքերն ու քրդերը հայ գիւղերում կոտորելիս ամէն մի տեղ մի ձև են մտածել՝ մի տեղ խաչել են ու եփել կամ խորովել - ինչպէս Գործօք ու Տիրամերիկ, մի տեղ փորերը ճղել ու աղիքներով զանազան խաղիք յօրինել-վզնետով ոտներով փաթաթել են՝ մի տեղ մորթոտել են, մի այլ տեղ գետն են ածել կապած (Աբաղա, Բերկրու կամուրջը), մի այլ տեղ (Խնձորկէն, 100 տնից աւելի) բոլորին՝ երեսներին, կանանց կախել են իրենց տներում օճորքների գերաններից (տղամարդկանց ձուռումն էին կոտորել)»²²:

Եւ այս անհաւատալի ոճրահանդէսը յղացողները բնազդային հաճոյք են ստացել սպանելու եւ ոչնչացնելու իրենց հանձարը գործադրելիս, որ մարդկային ուղեղը բնականաբար չէր կարող մտածել կամ պատկերացնել: «Բիթլիս 7 տարեկանից վեր բոլոր արուններին հաւաքել են կազարմաները ու ամէն օր 200-ական հանել ֆաղաբից դուրս, իրենց մեծ փոսեր փորել տուել ու կոտորել, ածել մէջը, - գրում է Թումանեանը: - Իսկ կանանց բշկէրները. Դատուան եւ շրջակայքում ցարենի հորերը դատարկել են, ժողովրդին ածել մէջը, ծածկել»²³:

Համոզուում ես, որ մարդկային վայրագութեան սիւրմանթոնյական նկարագրութիւնները ոչ թէ ռումանտիկական չափազանցութիւններ են, այլ դառն իրականութիւն:

22 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., Ուսումնասիրութիւններ եւ հրապարակումներ, հտ. 2, Երևան 1969, 369:

23 Անդ, 370:

Թումանեանին՝ Վանից վերադառնալուց յետոյ՝ Յուլիսի 23ին, մամուլի էջերում յայտնում են լուրեր այն մասին, որ Վանից, Ալաշկերտից եւ այլ բնակավայրերից դէպի Իգդիր եւ էջմիածին են գալիս մեծ թուով գաղթականներ: Ողբերգական լուրը Թումանեանին ստիպում է Յուլիսի 26ին «Հորիզոն» 166 համարում տպագրել «Հանգիստ ու լիքը հաւատով» յոգևածը՝ խոճապի մատնուած ժողովրդին փոքրիշատէ հանգստացնելու եւ ոգի տալու համար: Արձանագրելով այն ցաւալի փաստը, որ քուրդ-թուրքական սրածուծիւնից մազապուրծ հազարաւոր հայեր դարձեալ բռնել են գաղթի ճանապարհը՝ բանաստեղծը ժողովրդին յիշեցնում է իր դարաւոր պատմութիւնը, աւերածութիւններով ու կորուստներով լի ճանապարհը եւ յոյս յայտնում, որ սա վերջինն է լինելու. իրենց կողքին են աշխարհի մեծագոյն պետութիւններն ու լուսաւոր ազգերը: Խօսքն աւարտում է այն համոզմունքով, որ ինչքան էլ յուսահատութիւնն ու փորձութիւնը մեծ լինեն, հայերը պէտք է տանեն արիւնթեամբ, համախմբուած ու միահամուռ ուժերով դիմագրաւեն արհաւիրքը: Յօդուածն աւարտւում է ժողովրդին ուղղուած կոչ-յորդորով. «Վեր կեցեմք միասին, միահամուռ ուժերով դիմագրաւելու մեր վատքար թշմալիներին եւ դարման տանեմք ընդհանուր ազգային աղետին հանգիստ ու լիք՝ մօտիկ լաւագոյն ապագայի անսասան հաւատով»²⁴:

Մեծ հոգուց բխած այս կոչը չէր կարող անարձագանք մնալ, եւ առաջին արձագանքողը հէնց ինքն է լինում կոչի հեղինակը: Յուլիսի 29ի գիշերը Թումանեանը երկու դուստրերի հետ մեկնում է էջմիածին՝ տեղ հասած գաղթականներին առաջին օգնութիւնը կազմակերպելու համար: Սարսափելի տեսարան էր ներկայացնում այդ օրերին էջմիածինը: Գերմարդկային ջանքեր ու ներքին ուժ, ինքնամոռաց մարդասիրութիւն էին պահանջում իւրաքանչիւր մէկից, ով փորձում էր ինչ-որ բանով օգտակար լինել այդ անօգնական թշուառներին: Միշտ եւ ամէնուրեք առաջինը Թումանեանն էր, որ, ամէն ինչ մոռացած, անում էր հնարաւորն ու անհնարինը՝ ցաւի ծանրութիւնը ինչ-որ կերպ թեթեւացնելու համար: Էջմիածնում նրա ծաւալած անօրինակ գործունէութեան մասին բազմաթիւ են յուշերն ու վկայութիւնները, որոնց տողերում բարձրանում է Թումանեան մարդու, ազգային-հասարակական գործչի, որբերի «հայրիկի» անդու-

24 «Հորիզոն», 166, 1915:

գաղան կերպարը: Ինքնաբուխ, ջերմ ու անմիջական են յատկապես Անդրանիկի յուշերը: «1915ին, երբ Վասպուրականը գրաւուեցաւ ռուսներէն, Թումանեան Վան եկաւ տեսնելու իր ժողովուրդն ու հայրենիքը աւելի մօտէն: Ի՞նչ տպաւորութիւններով վերադարձաւ՝ չեմ գիտեր, բայց երբ 1915ին Մեծ գաղթը եղաւ ռուսներու կեղծ նահանջով, բանաստեղծը իր տունը, իր ընտանիքի վայելքները թողուցած, եկաւ իր երկու չափահաս աղջիկներուն հետ Էջմիածինի, Իգդիրի եւ Երեւանի փողոցներուն եւ վանքի պատերուն տակ խռնուած գաղթականներուն օգնելու... իր ցեղին բեկորներու համար ու տխուր անոց հետ, անոց ցաւն ու վիշտը բաժանելով: Իր արիւնակիցներուն դառն վիճակը եւ չարչարանքները խլեցին իր ինդուն ճակատէն ու աչքերէն ժպիտն ու ծիծաղը, անթեղելով իր սրտի մէջ իր ցեղին ցաւը»²⁵:

Այդ օրերին է որ, ինչպէս գրում է Անդրանիկ Ծառուկեանը, *էջմիածնում*՝ «հաւատքի ու արեան այն շտեմարանում», *Թումանեանը* «ստացաւ անմահութեան իր մկրտութիւնը»²⁶ *ամենայն հայոց բանաստեղծ պատուանունի տեսքով: Ի դէպ, այդ պատուանունի ծագման առիթ դարձած միջադէպը հաւանաբար կը հետաքրքրի «Բազմավէպի» ընթերցողներէից շատերին, ուստի աւելորդ չենք համարում համառօտ ներկայացնել այստեղ՝ մէջբերելով բանաստեղծի դատեր պատմածը, որ ականատես է եղել այդ միջադէպին: «Օգոստոսի 19ի գիշերն էր, - գրում է Ն. Թումանեանը,- Արարատեան դաշտի անմոռանալի, ծանր գիշեր... Փոթորիկ, կայծակ, որոտ... Երկինքը յանկարծ մթնեց, սեւակնեց, սեւ մութ ամպերով ծածկուեց, ու սկսուեց յորդ անձրեւը: Գաղթականութիւնը բաց երկնքի տակ էր: Հայրիկը սեւ թիկնոցով, կեպին գլխին շտապ դուռն եկաւ իր սեմեակից գաղթականութեանը շէնքերում պատկապարելու: Առաջին հերթին նա նկատի ուներ վեհարանի նոր, կիսաւարտ շէնքը, որ կաթողիկոսը մերժել էր գաղթականութեանը յատկացնել: Հայրիկը գայրացած էր: Հակառակ կաթողիկոսի արգելքին՝ նա գաղթականութեանը տարաւ դէպի նոր վեհարանի շէնքը... Այդ միջոցին հայրիկը յիշեցնում էր «Աղաւնու վանքի» հայր Օհանիկ»²⁷:*

25 Թումանեանը ժամանակակիցների յուշերում, Երեւան 1969, 551-552:

26 ՄԱՌՈՒԿԵԱՆ, Ա., Հիմ երազներ, նոր ճամբաներ, Պէյրուս 1960, 77-78:

27 Տե՛ս ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., Երկերի լիակատար ժողովածոյ, հտ. 2, Երեւան 1991, 165-167: «Աղաւնու վանքը» քալլադի դիպաշարը յիշեցնում է հայ ժողովրդի խորհրդաւոր ճակատագիրը: Հայ գեղիներն անվերջ մտնում

Ամենայն հայոց կաթողիկոսին դուր չէր եկել, որ հայրիկը կառուցուող վեհարանը դարձրել էր գաղթականների ապաստարան: Հետեւեալ օրը հայրիկին կանչում է իր մօտ բացատրութեան այդ ինքնակամ արարքի համար. չէ՛ որ ինքը արգելել էր: Հայրիկի բացատրութիւնը չի գոհացնում կաթողիկոսին, եւ նա յիշեցնում էր՝ «Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ» հայրիկն էլ պատասխանում է՝ «Գիտե՞ք, որ ես էլ Ամենայն Հայոց քանաստեղծն եմ»²⁸:

Աւելի ուշ՝ Հոկտեմբերի 21ին, «Լուսա» մէկօրեայ թերթում տպագրւում է Թումանեանի «Յիշողութիւններ էջմիածնի որբանոցից» յօդուածը, որտեղ անհուն տառապանքների բովով անցած բանաստեղծը յիշում է էջմիածնի որբանոցում հաւաքուած մինչեւ տասը հազար երեխաներ՝ գրեթէ մէկ առ մէկ վերապրելով նրանց իւրաքանչիւրի ցաւը. «Ես էլ մրանցից մէկն եմ, որ էս երեխաների մէջն էի, բայց երբ էսօր մատում եմ ու աշխատում եմ վերյիշել, կարծես թէ մրանց՝ երեխաներին չեմ տեսել: Չեմ տեսել, չեմ մտնաչել առանձին-առանձին: Սաստիկ, սաստիկ ծանր էր մրանց հետ խօսելն ու խօսեցնելը... Եթէ խօսել ու խօսեցրել եմ, էն էլ շատ քիչ, պատահմունքով... Սակայն շարունակ աչքիս առաջն է մրանց քաղմութիւնը, մրանց վտիտ, բաղցած ու մերկ քաղմութիւնը...»²⁹:

1915ի աշնանը Ազգային բիւրոյի կոչով աշխարհի տարբեր ծայրերից Կովկաս են գալիս հայկական կամաւորական նոր խմբեր՝ բերելով անհրաժեշտ գէնք ու զինամթերք, որ, սակայն, բռնադրաւում են ցարական պաշտօնեաների կողմից՝ տեղիք տալով յուսալքման: 1915 Դեկտեմբերի 27ին, ապա 1916 Յունուարի 7ին, ելոյթ ունենալով Ազգային խորհրդի նիստում, Թումանեանը բարձրացնում է այն կարեւոր խնդիրը, որ պէտք է անել ամէն ինչ՝ կամաւորական այդ խմբերը պահելու համար. դրանք ոչ միայն դարաւոր թշնամու դէմ կռուելու համար են, այլեւ ժողովրդի զաւակներին համախմբելու անհրաժեշտ խթան կարող են լինել: «Ամերիկայից մինչեւ Ասիա, - ասում է Թումանեանը, - հայ ժողովուրդը իր զաւակներով եւ փողով մասնակցում է

Էին վամբ եւ հայր Օհանի սուրբ աջով վերածուելով աղանձների՝ վերադառնում էին հայրենիք: Վերին խորհրդով ասես շարունակում էր հայ ժողովրդի յանձնարարական թռիչքը:

28 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Ն., *Յուշեր եւ գրոյցներ*, Երեւան 1969, 130-131:

29 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Յ., *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 7, 179-180:

այդ խմբերին: Էսպիսի ուրիշ դրուժինա չկայ եւ դրա համար իր յատուկ կազմակերպութիւնը պիտի ունենայ»³⁰: *Բայց հայրենիքի համար կռուելու պատրաստ կամաւորական խմբերը ցարական կառավարութեան անարդարացի վերաբերմունքի պատճառով յուսալքուում էին ու կազմալուծուում:*

Այդ պայմաններում բանաստեղծին մնում էր վերստին դիմել «գեղարուեստական քանի» հրաշագործ ուժին՝ յուսաբեկուածներին հաւատ ու ոգի ներշնչելու համար: 1916 թուականի սկզբին ի մի բերում եւ առանձին գրքով հրատարակում է իր հին ու նոր հայրենասիրական երգերի մի ժողովածու՝ «Հայրենիքիս հետ» խորհրդանշական խորագրով:

Գրքովի մէջ ամփոփուած ստեղծագործութիւնները ո՛չ ժամանակագրական, ո՛չ էլ այլ կարգի որեւէ հետեւողականութիւն չեն ներկայացնում: Միայն որոշակիօրէն նկատելի է բանաստեղծութիւնների ընտրութեան նպատակային բնոյթը. դրանք ներկայացնում են ժողովրդի անցած հազարամեակների ճանապարհը՝ անկումներով ու վերելքներով, բայց միշտ առանց փակուղային բեկումնների, ներկայացնում են նաեւ բանաստեղծի հոգու պատմութիւնը, որ անբաժան է ժողովրդի հաւաքական հոգու պատմութիւնից, ինչպէս յուշում է նաեւ ժողովածուի եւ առաջին բանաստեղծութեան ընդհանուր խորագիրը:

Շարքի բանաստեղծութիւններից երկուսի մասին՝ «Հայոց վիշտը» եւ «Հայրենիքիս հետ», արդէն առիթ եղաւ խօսելու: Կուգենայինք նշել նաեւ «Մեր ուխտը» եւ «Հոգեհամգիստը»: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ բանաստեղծութիւնները ստեղծագործական-հոգեբանական տարբեր պահերի ծնունդ են: Երկու դէպքում էլ դրանք արտայայտում են հայ բանաստեղծի, ընդհանրապէս հայ մարդու տեսակի բացառիկ յատկութիւնը՝ բարձր արժանապատուութեամբ տանել ճակատագրի հարուածները եւ պատմութեան փորձութիւնները: Մի դէպքում.

Մենք ուխտ ունենք, միշտ դէպի լոյս,
Ու գընում ենք մեր մամփով,
Մըրրիկներով զարկուած անլոյս,
Սեւ խաւարով, մութ ամպով:

....

30 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Լ., *Յովհաննէ Թումանեանի հասարակական գործունէութիւնը*, Երևան 1992, 176:

Բայց գրնում ենմ մենմ անվհեեր,
 Զարկերի տակ չար բախտի,
 Մեր աչքերը միշտ դէպի վեր,
 Դէպի լոյսը մեր ուխտի³¹:

Միւս դէպքում.

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
 Կանչեցի թըշուառ էն հոգիներին՝ ցըրուած յաւիտեան,
 Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծովն հայոց,
 Մինչեւ Հելլետապոնոս, մինչեւ Պոնտոսի փիերն ակերծ:
 -Հանգէ՛ք, իմ որբեր... ի գո՛ւր եմ յուզմունք, ի գո՛ւր եւ
 անշահ...

Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպէս կմնայ...³²

Բայց հայ ժողովրդին եւ ամենայն հայոց բանաստեղծին սպասում էին նոր սպառնալիքներ ու փորձութիւններ: 1917ի Նոյեմբերի 7ին Ռուսաստանում տեղի է ունենում յեղափոխութիւն, որի հետեւանքով փլուզւում է մեծ կայսրութիւնը: Ռուսական բանակը արեւելեան ռազմաճակատում լքում է դիրքերը՝ շտապելով իր երկիրը, որ ինքն էր յայտնուել նոր ու դժուարին խնդիրների առջեւ: Շուտով նաեւ գինադադար է կնքւում Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ: Թուրքական բանակի եւ ազատ աւագակախմբերի համար լայն հնարաւորութիւններ են ստեղծւում հաշուեյարդար տեսնելու ռուսական գէնքի ժամանակաւոր յաջողութիւնները ողջունած ազգային փոքրամասնութիւնների, առաջին հերթին արեւմտահայութեան մնացորդների հետ: Նրանք արագօրէն յետ են գրաւում ազատագրուած հայկական տարածքները, մուտք գործում Արեւելեան Հայաստան: Գրաւում են Ալեքսանդրապոլը, Ղարաբաղի խան, մօտենում են Սարդարապատին: Սպառնալիք էր ստեղծուել նաեւ արեւելահայութեան բնաջնջման համար: Կազմւում է Ազգային խորհուրդ, անպաշտպան մնացած երկիրը փրկելու համար: 1917ի Դեկտեմբերի 17ին Անդրանիկը մեծ հանրահաւաք է կազմակերպում Թիֆլիսում, կազմակերպուած ինքնապաշտպանութեան կոչ է անում ժողովրդին, դիմելով նրա «գոյութեան հարցի գիտակցութեան եւ քննադիմ»: Զօրավարի այդ կոչին առաջին արձագանքողը դարձեալ Թումանեանն

31 ԹՈՒՄԱՆԵԱՆ, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, էջ 201:

32 Անդ, 279:

էր: Անդրանիկին ուղղուած բաց նամակում մասնաւորապէս գը-
րում է. «Սիրելի Անդրանիկ, ահաւոր մոմենտի առջեւ ամէն մարդ
պէտք է ընդհանուրի սեղանին բերի, ինչ որ ունի եւ կարող է, թէ
վերահաս վտանգը կանխելու եւ թէ բաղձալի խաղաղութիւնը հաս-
տատելու համար:

Ես չորս տղայ ունիմ, չորսն էլ երկրի կառավարութեան, Ազ-
գային խորհրդի եւ Քո տրամադրութեան տակ են, իսկ չորս աղջիկս
էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ
ընդունակ կլինեն:

Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետեւաբար ո-
չինչ չեմ խնայել, միայն թէ կարողանամ քոլոր ազնիւ ժողովուրդ-
ների հետ միասին ետ մղել վերհաս վտանգը եւ պաշտպանել ամէն-
քիս սրբազան իրաւունքներն ու ազատութիւնը»³³:

*Այսպէս էր ահա Թումանեանը ե'ւ լաւ օրերին, ե'ւ փորձու-
թեան ժամերին «ամէնքի հետ ապրում» եւ «ամէնքի չափ տառա-
պում»: Եղել են, ի հարկէ, ափսոսանքի պահեր, որ ժամանակ չի
ունեցել ամբողջապէս տրուելու իր սիրած ստեղծագործական
աշխատանքին, ինչպէս յայտնի քառեակում.*

Կեանքս արի հըրապարակ, ոտքի կոխան ամէնքի.

Խափան, խոպան ու անպտուղ, անցաւ առանց արդիւնքի:

Ի'նչքան ծաղիկ պիտի բուսնէր, որ չըբուսաւ էս հողին...

Ի'նչ պատասխան ես պիտի տամ հող ու ծաղիկ տուողին...

*Բայց սա բանաստեղծի ափսոսանքն էր, ներքնապէս միշտ
նրան տանջող ստեղծագործական դրաման: Թումանեանը հաւա-
նաբար չէր էլ գիտակցում, որ իր ապրած կեանքն ինքնին մի
հրաշակերտ ստեղծագործութիւն է, որ փափաքելի բախտ է շա-
տերի համար, բայց բաժին է հասնում միայն Աստուծո ընտրեալ-
ներին:*

ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆՆԱՆ

33 թԹԻՄԱՆՆԵԱՆ, Յ., *Երկերի լիակատար ժողովածոյ*, հտ. 10, 281-282:
Թումանեանի պատասխանը լոյս է տեսնում «Հայաստան» թերթի 183
համարում, որ հրատարակուել էր Անդրանիկի անձնակամ միջոցներով
Թիֆլիսում: Թումանեանի այս բաց նամակը արտատպում են Թիֆլիսի
մի քանի այլ թերթեր եւս:

Summary

THE ARMENIAN GENOCIDE AND HOVHANNES TOUMANYAN

EVA MNATSAKANYAN

The article basically describes the activities carried out by Hovhannes Toumanyanyan in the days of Genocide. In light of historical perspectives, it depicts the views and findings which survived in the criticism of the time. All these not only clarify Toumanyanyan's national-political views and humane portrait, but also his understanding of reality. In this context the overall atmosphere of the time is highlighted.

The poet of all Armenians was indeed great and talented not only as a poet, but also as a man unconditionally devoted to his nation, whose conscious life burnt for his people. In those fatal years, Toumanyanyan's patriotism was displayed in different spheres and ways: he gave birth to valuable patriotic poems, numerous public and political articles, very important records and diaries. He was in all places, where the Armenian people who needed physical and spiritual assistance, warmth and love, struggled and survived.